ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«23» «մարտ» 2021 թ. № 93-Հ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-ի N 449-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի նոյեմբերի 24-ի «Շրջակա միջավայրի նախարարության գործավարության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2017 թվականի հուլիսի 13-ի N225-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 449-Ա հրամանի հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 33.1-րդ կետով.

«33.1. Հանձնարարականի 1-ին կատարողն ուսումնասիրելով հանձնարարականը եթե պարզում է, որ հանձնարարականի կատարման համար անհրաժեշտ է նշանակել լրացուցիչ համակատարողներ, ապա ստանալուց 1 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է վերահասցեագրման համապատասխան առաջարկով:

Եթե 1-ին կատարողն ուսումնասիրելով հանձնարարականը պարզում է, որ այն չի առնչվում ստորաբաժանման գործառույթներին, ապա ստանալուց 1 աշխատանքային օրվա ընթացքում հիմնավորումներով ուղարկում է վերահասցեագրման անմիջական ղեկավարին/մակագրողին: Վերահասցեագրման առաջարկն ուսումնասիրելուց հետո անմիջական ղեկավարը/մակագրողն առաջարկն ընդունելու դեպքում հանձնարարականը վերահասցեագրում է, չընդունելու դեպքում՝ կրկին մակագրում է:»:

ՆԱԽԱՐԱՐ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

3/23/2021

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

«23» մարտ 2021թ.
ք. Երևան